

# **ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ «ԴԵ ՖԱԿՏՈ» ԱՄՍԱԳՐԻՆ**

**1. Հարգելի պարոն Վարդանյան, արդեն ավելի քան երեք տարի է, ինչ ստանձնել եք ՀՀ քաղաքաշինության նախարարի պաշտոնը: Դա հենց այն ժամանակահատվածն էր, երբ Հայաստան հասավ համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Ի՞նչ խնդիրներ ուներ ոլորտն այդ ժամանակ:**

Այո, վերջին երեք տարում համաշխարհային տնտեսությունը գործում էր ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում: Ճգնաժամը Հայաստանում առաջին հերթին հարվածեց հենց շինարարությանը, որի տեսակարար կշիռը վերջին տարիներին երկրի ՀՆԱ-ում հասել էր համարյա 40 տոկոսի: Եւ բնական է, անկումն էլ պետք է մեծ լիներ հենց այստեղ: Ընդհանուր առմամբ ոլորտն ունեցավ մոտ 37 տոկոս անկում, իսկ դա նշանակում է եւ շինարարական պրոցեսների ընթացքի դանդաղում ու կասեցում, եւ աշխատատեղերի կրճատում, եւ շինանյութերի արտադրության նվազում: Բացասական հետեւանքների թվարկումը կարելի է շարունակել, սակայն այստեղ կարելու է տարբերակել, թե ինչ անկում է արձանագրվել պետական եւ մասնավոր հատվածում: Պետք է նշեմ, որ անկման առյուծի բաժինը վերաբերում էր մասնավոր ներդրողներին, որոնք միջոցների սղության կամ բացակայության պատճառով ստիպված էին դադարեցնել գործունեությունը կամ սառեցնել ծրագրերը: Պետական հատվածում կառավարության հակաճգնաժամային ծրագրի շնորհիվ պատկերն այլ է: Նախ, որ ամենակարելու է, աղետի գոտու վերականգնման ծրագիրը շարունակվեց ֆինանսավորվել նախկին տեմպով, եւ այնտեղ աշխատանքն ընթանում է ժամանակացույցին համապատասխան: Փոքր-ինչ նվազել են դպրոցաշինության, մարզական, առողջապահական, մշակութային օբյեկտների նորոգմանն ու կառուցմանն ուղղված միջոցները, սակայն կարծում եմ, որ հաջորդ տարիների հատկացումները կլինեն շատ ավելին:

**2. Եւ եթե այսօր գնահատելու լինեք, ապա ինչպե՞ս հաղթահարեց քաղաքաշինությունն այդ ճգնաժամը:**

Այս պահին դժվար է գնահատել, թե մեր ոլորտում ճգնաժամը լիովին հաղթահարված է, թե ոչ: Ժամանակակից շինարարությունը մեծ ներդրումներ պահանջող բիզնես է, եւ լիովին վերականգնվելու եւ նախկին տեմպերին հասնելու համար ժամանակ է անհրաժեշտ: Եթե նկատենք, որ հանրապետությունում շինարարությունը հիմնականում ընդգրկում էր բնակարանաշինարարության ոլորտը, իսկ անշարժ գույքի շուկայում այսօր գների անկումը դեռ պահպանվում է, ուրեմն լիովին վերականգնման մասին խոսելը դեռ վաղ է: Կարող ենք արձանագրել, որ ճգնաժամի առաջնային հետեւանքները արդեն հետեւում են, եւ մենք մտել ենք վերականգնման փուլ:

### **3. Առաջնային ի՞նչ խնդիրներ է դրել այսօր նախարարությունն իր առաջ:**

Նախարարությունն առաջնորդվում է կառավարության գործունեության ծրագրով, եւ մենք ունենք հստակ արձանագրված գերակայություններ: Արդեն նշեցի աղետի գոտու վերականգնման ծրագրի մասին: Այն լիովին իրականացնելը պատվի գործ է: Հազարավոր ընտանիքներ 20 տարի ապրել են անօթեանի կարգավիճակում, վագոն-տնակների մեջ, զուրկ տարրական կենցաղային պայմաններից, էլ չեմ ասում, որ այս տարիների ընթացքում հենց այդ վագոն-տնակները սպառել են իրենց պիտանության ժամկետը: Նշեմ նաեւ, որ աղետի գոտու վերականգնման ծրագիրը հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրի կարեւոր բաղկացուցիչներից մեկն է, եւ գտնվում է նրա ամենօրյա ուշադրության կենտրոնում: Մեր նախարարությունը 15-օրյա պարբերականությամբ աղետի գոտում իրականացվող շինարարության վերաբերյալ տեղեկանք է ներկայացնում նախագահին, եւ պետք է ընդգծեմ, որ ցանկացած խնդրի կամ խոչընդոտի դեպքում նախագահի արձագանքը օպերատիվ է եւ միշտ՝ հօգուտ անօթեանի:

Այսօրվա մեր գերակայություններից մեկն էլ տարածական պլանավորման համակարգի կատարելագործումն է: Մինչեւ 2016թվականը մեր հանրապետության բոլոր բնակավայրերը պետք է ունենան գլխավոր հատակագծեր, այդ աշխատանքը ընթացքի մեջ է: Հանրապետության 50-ից ավելի բնակավայրեր արդեն ունեն գլխավոր հատակագծեր, մյուսներինը մշակման փուլում է: Գերակա խնդիր է նաեւ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման բնագավառի օրենսդրության կատարելագործումը: Ոչ պակաս կարեւոր է ինքնակամ շինարարության հիմնախնդիրների լուծման միջոցառումների իրագործումը, քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգումը:

### **4. Եթե խոսենք թվերով, ապա ինչպիսի՞ն են գործունեության ծավալները մայրաքաղաքում եւ մարզերում: Արդյոք պահպանվում է այդ ծավալների համամասնությունը:**

Ես կրկին պետք է տարբերակեմ պետական եւ մասնավոր հատվածի գործունեությունը: Ակնհայտ է, որ քաղաքաշինական գործունեության գերակշիռ մասը մասնավոր ներդրողն աշխատում է իրականացնել մայրաքաղաքում կամ առնվազն խոշոր քաղաքներում, որտեղ անշարժ գույքի գինը մի քանի անգամ ավելի բարձր է, քան գյուղական բնակավայրերում: Դրան ի հակակշիռ պետք է ընդգծեմ, որ հանրապետության տարածական համաչափ զարգացման ծրագրին համահունչ, պետական բյուջեի միջոցով իրականացվող քաղաքաշինական ծրագրերի 75-80 տոկոսն իրականացվում է մարզերում: Դա եւ աղետի գոտում իրականացվող բնակարանաշինությունն է, եւ դպրոցաշինությունը, եւ մարզական, մշակութային, առողջապահական օբյեկտների կառուցումն ու հիմնանորոգումը: Եթե հաշվի առնենք նաեւ գյուղատնտեսական արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը, որոնք նույնպես կառուցվում են գյուղական վայրերում, ապա կարող ենք

արձանագրել, որ ծավալային առումով տարբերությունը շատ մեծ չէ, ինչը, իհարկե, չի կարելի ասել արժեքի մասին:

**5. Անդրադառնանք բնակարանաշինությանը՝ կրկին համեմատական անցկացնելով մայրաքաղաքի եւ մարզերի միջեւ:**

Նախորդ հարցին պատասխանելիս ես արդեն խոսեցի պետական եւ մասնավոր շինարարության գերակայությունների մասին: Կարծում եմ գիտեք, որ պետական բնակարանաշինության ծրագիր Հայաստանում իրականացվում է առայժմ գրեթե բացառապես աղետի գոտում: Հետագա տարիներին նախատեսվում է բնակարանների կամ բնակելի տների կառուցում նաեւ Արծվաշենից բռնագաղթածների համար Գեղարքունիքի մարզում:

**6. ՀՀ քաղաքաշինության նախարարության հիմնական թիրախային ուղղությունը բնակարանային առումով Գյումրին է: Կա՞րդյոք ժամանակացույց, որով մենք վերջնականապես կազատվենք <<աղետի գոտի>> հասկացությունից:**

<<Սպիտակի երկրաշարժի հետեւանքով բնակարան կորցրած եւ անօթեւան ընտանիքներին բնակարանով ապահովման հայեցակարգի>> համաձայն, մինչեւ 2013 թվականի վերջ բոլոր հաշվառված եւ ծրագրի շահառու ճանաչված բոլոր ընտանիքների բնակարանային խնդիրը կլուծվի: Ընդհանուր առմամբ Շիրակի մարզում ծրագրի ավարտին մենք կունենանք նորակառույց, ամուր ու գեղեցիկ 2583 բնակելի տուն 226 հազ. ք.մ. ընդհանուր մակերեսով, որից Գյումրիում կառուցվել եւ կառուցվում է 59 բազմաբնակարան շենք՝ 212 հազար ք.մ. ընդհանուր մակերեսով: 1056 գյումրեցի ընտանիք արդեն տոնել է բնակարանամուտը, մյուսները բնակարանների բանալիները կստանան ճշգրիտ նախանշված ժամկետում: Սպիտակում կառուցվել եւ կառուցվում է 354 անհատական բնակելի տուն ու սպասարկման օբյեկտ, իսկ Լոռու մարզի 24 գյուղական բնակավայրերում՝ առնվազն 1821 անհատական բնակելի տուն: Վստահեցնում եմ, որ ծրագիրը կավարտվի սահմանված ժամկետում, իսկ աշխատանքի որակը կհամապատասխանի նախատեսված չափանիշներին: